ԼԵՆԻՆԻ ԿԵՐՊԱՐԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ԱՐԱ ԴԵՎՈՐԳՅԱՆ

Հայ բանաստեղծական լենինիանան սկսվում է Հակոբ Հակոբյանի և Վահան Տերյանի լիրիկական հայտնություններից։ Լինելով իրենց ժամանակի առաջավոր հասարակական գործիչներ՝ այդ պոետները գտնում էին, որ լենինյան ուղին ամենաճիշտ և ամենահեռանկարային ուղին է Հայաստանի բախտի համար։ Պետք էր ամբողջ խորությամբ և բազմակողմանիությամբ լուծել ատ-պիսի մի խնդիր, որպիսին մեծ Լենինի կերպարի գեղարվեստորեն վերարտադրումն էր։ Այդ խնդիրը իրագործեց Եղիշե Չարենցը, մի պոետ, որը հստակորեն գիտակցել է «ժամանակի գարկերակը», և որին կյանքի էր կոչել լենինյան դարը։

Լենինյան բնավորության բացահայտմանը և Իլյիչի կյանքից վերցված իրադարձությունների գեղարվեստական մշակմանը Ե. Չարենցը նվիրեց իր ստեղծագործական կյանքի նշանակալից մասը և կարողացավ ստեղծել մի այնպիսի հարազատ և պայծառ կերպար, որի շնորհիվ Լենինի մասին նրա գրած գրեթե բոլոր գործերը մտան սովետական լենինապատումի ոսկե ֆոնդը։

Եթե Հակոբ Հակոբյանի պոեզիայում լենինյան թեմայի զգացմունքային-ռոմանտիկական լուծումը հանգեցնում էր Վլադիմիր Իլյիչի կերպարի լիրիկական-սիմվոլիկ մշակմանը, որը հիմնականում հատուկ էր հեղափոխության առաջնորդի կերպարի բանաստեղծական իմաստավորման առաջին փուլին, ապա Ե. Չարենցի մոտ առաջին պլան է քաշվում սովետական պետության ստեղծողի կերպարի էպիկական վերստեղծման և պատմական կոնկրետ փաստերին ռեալիստորեն մոտենալու վճռական փորձը։ Լ. Պոլոնսկին նկատում է. «Այն արվեստագետը, որը մտահղացել է Լենինի կերպարը մարմնավորել պոեմում կամ վեպում, օրատորիայում կամ պատկերանկարում, ներկայացման կամ ֆիլմի մեջ, ստանձնում է վիթխարի պատասխանատվություն ոչ միայն ժամանակակիցների, այլև պատմության առաջ. գալիք սերունդները մեր օրերի գրականության և արվեստի մասին դատելու են ըստ այն բանի, թե ինչպես են կարողացել նրանք սերունդներին հասցնել բոլոր դարերի և ժողովուրդների մեծագույն հանճարի կերպարը»[1]։

Հենց այդպիսի պատասխանատվություն իր վրա վերցրեց հեղափոխության բանաստեղծ Ե. Չարենցը։

Բանաստեղծի հասունացումը տեղի էր ունեցել հեղափոխական իրադարձությունների հորձանուտում։ Հոկտեմբերյան հեղափոխությունը օրրան հանդիսացավ ականավոր շատ գրողների համար. հեղափոխությունը ոչ միայն արթնացրել էր նրանց գիտակցականությունը, այլև դարի շատ գրողների համար դարձել էր ստեղծագործական հեռանկար։

---

[1] Л. В. Полонский, Образ В. И. Ленина в советской художественной литературе, Тюмень, 1969, с. 7.

XX դ. պոեզիայի մեջ Ե. Չարենցի զրաղեցրած տեղի մասին լավ է գրել ֆրանսիացի բանաստեղծ Լուի Արագոնը. «Մեր դարը իր վրա կրում է մի քանի մեծ բանաստեղծների անունների դրոշմը։ Անգլիայում՝ դա Կիպլինգն է, Ֆրանսիայում՝ Ապոլլիները և Էլյուարը, Գերմանիայում՝ Ռիլկեն, Իսպանիայում՝ Գարսիա Լորկան, Ռուսաստանում՝ Մայակովսկին և Սսենինը, Հայաստանում՝ Չարենցը և Իսահակյանը»[2]։

Լենինի կերպարի վերստեղծման պատմական անհրաժեշտությունը բանաստեղծի մեջ արթնացրեց զգացմունքների և ապրումների մի հզոր գամմա. բանաստեղծ-քաղաքացին այլևս չէր կարող լռել. Իլյիչի մասին նրա խոհերը վերամարմնավորվեցին հրաշալի ստեղծագործությունների և դարձան նրա գրական ժառանգության պսակը։ Հեղափոխության թեման սկսեց ստեղծագործորեն խորացվել Լենինի կերպարում։ «Այսուհետև լենինյան թեման ամբողջապես գերեց հայ բանաստեղծին. նրա լենինիանան՝ դա բարդ պոլիֆոնիկ ստեղծագործություն է, պատմության, փիլիսոփայության, փաստերի, իրադարձությունների, մտորումների մի համաձուլվածք. դա մարդկության, Եվրոպայի, Ռուսաստանի, Հայաստանի ճակատագրի վերաբերյալ բանաստեղծի մեծ և խոր խորհրդածությունների հանրագումար է»[3]։

Ե. Չարենցի լենինիանան մեծ կերպարի աստիճանական ըմբռնման մի պրոցես է։ Այդ թեմայի վրա կատարած լարված ստեղծագործական աշխատանքի հետևանքով հայ բանաստեղծը կարողացել է ընկալել և պատկերել Լենինի գործունեության այնպիսի կարևոր կողմերը, տալ Լենինի կյանքից վերցված պատմական կոնկրետ փաստերի այնպիսի խորը մեկնաբանություն, որ ճանաչված շատ բանաստեղծների ուժից վեր էր։

Ե. Չարենցը, զգալով ժամանակի ոգուն իր մասնակից լինելը, «Խոհ» բանաստեղծության մեջ (1929 թ.) գրել է.

Ես մարդ եմ, պոետ ու քաղաքացի.
Ապրում եմ ահա լենինյան դարում...
Եվ այնպես, ինչպես բոլոր դարերում
Կապված է եղել մարդը իր դարին,—
Ես իմ մեջ այսօր տենչերն եմ կրում
Մեր ժամանակի անդո՛ւլ պայքարի[4]։

Բանաստեղծ-քաղաքացու համար ոչինչ ավելի սրբազան չէ, քան Լենինի կերպարը։ Նա իր դարաշրջանը չի պատկերացնում առանց համաշխարհային պրոլետարիատի առաջնորդի օրգանական ներկայության, առանց նրա անմահ գործերի՝ ներկայում և ապագայում։

Լենինի մասին քսանական թվականներին Ե. Չարենցի գրած բանաստեղծություններին և պոեմներին բնորոշը թեմաների արդիականությունն է, որոնք ամբողջ հասակով հառնել էին սովետական գրականության առջև։ Դարաշրջանի ռոմանտիկական տրամադրությունը բանաստեղծներին նույնպես ստիպում

---

2 Գ. Հովնան, Եղիշե Չարենց, ստեղծագործությունների միջազգային արձագանքները, Երևան, 1978, էջ 27։

3 А. Салахян. Э. Топчян, Поэзия Егише Чаренца (в кн. «Егише Чаренц», Л., 1973, с. 29).

4 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, վեց հատորով. Երևան, 1962—1968, հ. 1, էջ 38։ Այսուհետև հատորը և էջը նշվելու են մեջբերումների կից։

էր կատարել էքսկուրսներ դեպի գալիքի խորքերը, և «ժամանակի մեքենայով» կատարված այդ ճանապարհորդությունները բացահայտում էին «կոմունիստական վաղվա» պլանների և մասշտաբների վիթխարիությունը։ «Ես և Իլյիչը» (1923 թ.) բանաստեղծության մեջ, որն ունի «Մի Էպիզոդ իմ ճանապարհորդությունից՝ կատարված Ուելսի ժամանակի մեքենայով դեպի 2500 թ.» ենթավերնագիրը, Ե. Չարենցի անսասան միտքը նկարագրում է մարդկության ապագան հինգ-վեց դար հետո։ Մոռացված են հեղափոխության դարաշրջանի բոլոր ականավոր գործիչները, ոչ ոք չգիտի բանաստեղծ Ե. Չարենցին, որն ապրել և ստեղծագործել է XX դ. սկզբին, շփման ոչ մի եղր չկա գալիքի մարդկանց հետ։ Բայց, հանկարծ, բանաստեղծը հանդիպում է նրան, ով դեռևս կենդանի ժամանակ անմահ էր, միայն նա է մնացել դարերում։ Բանաստեղծը հանդիպում է Վլադիմիր Իլյիչի կիսանդրուն.

Ակնարքը—
Ի՞նչ էր...
Հասկանո՞ւմ եք՝ էդքա՜ն տարի հետո
Աշխարհում, որ փոխվել է—
Հանդիպում ենք—ես և... Իլյիչը...
Նա ինձ նայում է ժպիտով.
Ինձ ճանաչում է նա տարիների տակից...
— Է՞յ, ժամանակ,
Դո՜ւ դեք,
Խինդս դո՜ւ ընդունիր դարերից,
Ճիչս,
Խնդությունս ռակետ... (հ. 3, էջ 168)։

Իլյիչի մահվան անմիջական արձագանքը եղավ «Լենին» բանաստեղծությունը (1924 թ.)։ Այստեղ բանաստեղծը փորձում է պարզել մարդկության պատմության մեջ Լենինի տեղն ու նշանակությունը. կորստյան ցավը պահանջում է գիտակցել կորստի արժեքը։

Լենինը համաշխարհային պատմության բայրագույն նվաճումն է, ամբողջ պատմական զարգացման պսակը։ Լենինի կերպարին այդպես համապարփակ կարող էր մոտենալ միայն իր դարաշրջանի մեծ բանաստեղծը, Լենինի անմահությունը այդպես կարող էր գիտակցել միայն նա, ով ինքը ուներ բարձր գիտակցականություն, նա, ով ինքը «իր դարի խիղճն էր»։ Մեծը մոտիկից տեսնել կարող են միայն մեծ մարդիկ։ Այդպիսին էր Ե. Չարենցը։ Ահա՛ թե ինչպես է բանաստեղծը մեզ մոտեցնում ընկալելու առաջնորդի կերպարը.

Գիտե՞ք թե աշխարքի արգանդից
Ինչքա՜ն հանճարեղ մարդիկ.
Ինչքա՜ն, ինչքա՜ն Կրոմվել,
Կամ հնդիկ Գանգի—
Անթիվ
Եղել են,
Կան դեռ,
Ու կգան.—

Այնինչ Իլյիչը—մեկ է,
Ուրիշ Իլյիչ—դժվար թէ,
Ուրիշ Իլյիչ—չկա (հ. 3, էջ 149)։

Լենինի մահվամբ առաջացած մեծ վիշտը պահանջել է առաջնորդի կերպարի մոնումենտալացում, նրա գաղափարների անմահության մարգարեական կանխատեսում։ «Միլիոնների վիշտը ցույց տվեց հեղափոխության և նրա առաջնորդի մեծությունը. համաժողովրդական վշտի մեջ տեղի էր ունենում մարդկային հոգիների իսկապես ողբերգական վսեմացում և վերացում առօրեականությունից՝ յուրաքանչյուր մարդ կրկին դիտակցեց և իր մեջ ընկալեց պատմությունը, ղգաց Լենինի կուսակցության հետ միավորվելու անձնական պատասխանատվության չափը»[5], Վ. Մայակովսկին ու Ե. Չարենցը, ասես Յեռք-ձեռքի տված, ստեղծում էին Լենինի կերպարը և մեկը մյուսից անկախ, գալիս էին այն եզրակացության, թե Լենինը մարդկային պատմության օբյեկտիվ զարգացման հանրագումարն է, աշխատավորների հաղարավոր սերունդների տառապանքների հանրագումարը։

«Կոմունարների պատը Փարիզում» պոեմում Ե. Չարենցը նոր տողեր է դտնում մեծ հանճարի հիշատակի հավերժացման համար.

Լենինը—
Դե որպես երկրագունդը։
Այսինքն՝ աշխարհը,
Որ հավաքել է կյանքը իր ջղերում։
Լենինը
Հավաքել էր իր մեջ—
Հիսուն հաղար սերունդ։
Բանվորական, իհարկե,
Բանվորական սերունդ։
. . . . . .
Հարկավոր էր ամբողջ մի դասի
Ինչքա՜ն բրտինք ու ջանք,
Որ ծնվեր հանճար մի այնպիսի,
Ինչպիսին էր ինքը... (հ. 2, էջ 245—246)։

Լենինյան թեման պահանջում էր նաև առաջնորդի՝ կերպարի կոնկրետացում, որը դրսևորվեց «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին» (1924 թ.) պոեմում։ Լենինի կերպարի մարմնավորման պարզությունը անընդհատ վերափոխվում է համապարփակ բնավորության ընդհանրացումների.

Հեռախոսով հուզումը հոսում է
Կոնմլ։
Կոմուտատոր N,
Դեպի կաբինետը Իլյիչի։
Լուրերը թափվում են շտապով,

[5] Л. Акопян, Образ Ленина в многонациональной советской поэзии, Ереван, 1974, с. 10—11.

Հասնում են հենց իրեն,
Ու հոսում են հետո
Տապով
Իր ուղեղի միջից (հ. 2, էջ 192)։

Կոմունիստական կուսակցության հիմնադրի կերպարին այդպես բնական, պարզ, բայց և միաժամանակ այդպես վեհասքանչ կարող էր մոտենալ այն մարդը, ով խորապես դիտակցել է կորստի մեծությունը։ Լենինի մահը ողբերգական իրադարձություն էր ոչ միայն սովետական մարդկանց կյանքում, այլև Թուրք Թիավար Ալիի կյանքում։ «Լենինն ու Ալին» պոեմում Ե. Չարենցը ասես շարունակում է այն ավանդույթները, որոնց հիմքը դրվել էր տակավին 20-ական Թվականներին՝ Նիկոլայ Տիխոնովի «Սամի» պոեմով։ Ինչպես հնդիկ երեխան, այնպես էլ Թուրք Թիավարը բնակչության ամենախուլ խավերի ներկայացուցիչներն են, բայց այդ պոեմներում կարևորը Լենինի՝ մարդ-մարդարեի, միջազգային նշանակության բացահայտումն է, մարդ, որն աշխարհին բերել է հումանիզմ և սեր՝ նվաստացյալներին ու անարգյալներին։

Պոեմը գրելուց մի քանի տարի հետո, երիտասարդ գրողների հետ կիսվելով իր պոեմի ստեղծագործական պատմության շուրջը, Ն. Տիխոնովը գրել է. «Արևելքում Լենինի մասին լեգենդներ են ստեղծվում։ Լենինի գիմանկարը կարելի է գտնել, օրինակ, հովիվների մոտ քարանձավներում, որևէ մի տեղ Ասիայի լեռներում։ Լեռներում լեռանցքների ամենաբարձր կետերում ստեղծում են քարերի բլրակներ. փոթորկի ժամանակ այդ բլրակների միջոցով ուղևորները գտնում են ճանապարհը։ Քարերի այդպիսի բլրակներ են կիտվում նաև Լենինի դիմանկարի առաջ»[6]։

Ինչպես Ն. Տիխոնովը, Ե. Չարենցը ևս իր պոեմի համար օգտագործել է կյանքի կենդանի փաստերը։ Ահա թե ինչ է ասել հեղինակը այն արժանահավատ իրադարձությունների մասին, որոնք առիթ են ծառայել գրելու այդ գործը. «P. S. Պոեմի նյութը վերցված է իրականությունից։ Տրապիզոնի մեր համամիութենական հյուպատոսն ինձ պատմեց, որ Լենինի մահվան լուրը Տրապիզոն հասնելու օրը, կես գիշերին իր մոտ է գալիս Ալի անունով մի Թուրք նավաստի, իր վիշտն ու հարգանքը հայտնելու։ Կարծում եմ դեպքն արժանի է ավելի լավ պոեմի, քան սա»[7]։

Սամիի և Ալիի պատկերացումները Լենինի մասին պարզունակ են, բայց դլխավորն այն է, որ նրանց համար Իլյիչը, ինչպես նաև այն քաղաքը, որտեղ նա ապրում է, ուսուցանող սկզբունք է, օգնում է պայքարելու սահիքների, տերերի, բռնության դեմ և հավատ է ներշնչում մարդու հանդեպ։ Սամին Լենինին պատկերացնում է այսպես.

— Ձյունների ետև, սանդուխքի նման՝
Որով կարծես Թե մարդ երկինք կելնի,
Ապրում է նա մեծ քաղաքում հիմա
Եվ մարդիկ նրան կանչում են Լենին.
Նա հաց է տալիս մարդկանց սովատանջ.
Նա նույնիսկ դայլին մարդ է դարձնում.

---

6 «Литературная учеба», 1931. № 5, с. 104

7 Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1963, էջ 350։

Նա մեծ սահիք է երկնքի առաջ,
Երբեք մտրակով նա մարդ չի ծեծում[8]։

Ե. Չարենցի մոտ թիավար Ալին նույնպես անմիջականորեն, մեծ ոգևորությամբ նկարագրում է առաջնորդի և այն քաղաքի պատկերը, որտեղ նա ապրում է.

Աշխարհի կենտրոնը—Մոսկո՛վն է։
Մոսկովը Մեկկայից էլ հի՛ն է։
Մոսկովից մեծ քաղաք—չի՛ք։
— Քանի որ Մոսկովի միջին
Ապրում է ինքը—Լենինը (հ. 2, էջ 206)։

Գրականագետ Վ. Պիսկունովը նկատում է. «Ն. Տիխոնովը և Ե. Չարենցը Լենինի դիմանկարի առաջ դրել են իրենց պոեմները, որոնց հերոսները ներքնապես շտկվում են և ճշմարիտ ուղի են գտնում Վլադիմիր Իլյիչի շնորհիվ... Նրանց ստեղծագործությունների լիրիկական-ռեալիստական տենդենցները, որոնք հաճախ սկիզբ են առնում բանահյուսական քաղցրահնչեղությունից, անկեղծությունից, պարզությունից, հակադրվում էին վերացական-ռոմանտիկական սկզբունքներին և ձևերին»[9]։

Ժողովրդի աչքում Լենինը «պարզ է ինչպես ճշմարտությունը»։ Բանաստեղծը նրան է ուղղում առաջավոր, առաջադիմական ամեն ինչ, նրա մեջ տեսնելով ազատագրությունը դարավոր ճնշումից և անհավասարությունից։ Ահա թե ինչու «Լենին քեռին» (1924 թ.) խորապես էպիկական պոեմի փոքրիկ տղա Վանյան անգամ հասկանում է, որ Լենինը իր դարաշրջանի հրաշքն է և նրա հանդեպ լցվում է նույնպիսի սիրով ու հարգանքով, ինչպես մեծերը։ Ահա այդ սրտահույզ սիրուց տղան սկսում է երազել իր ապագայի մասին, երազել այն ժամանակի մասին, երբ ինքը նույնպես իր հոր և նրա ընկերների հետ միասին շարքով կանցնի Լենինի առջևից.

Եվ որոշեց Իվանը, որ անպայմա՛ն երթա—
Իրա բոլոր մտքերը Լենին-քեռուն ասի...
Երթա ասի, որ ինքը կուզե շոֆեր դառնալ,
Կամ օդաչու կարմիր՝ թռչել անահ...
Այդ հարազատ, այդ մեծ Լենին-քեռու առաջ
Իրա բոլո՛ր, բոլոր գաղտնիքները բանա... (հ. 2, էջ 205)։

Ե. Չարենցին, ինչպես և պրոլետարական մեծ բանաստեղծ Վ. Մայակովսկուն, օտար է առաջնորդի քաղցր-մեղցր կերպարի ստեղծումը։ Ե. Չարենցը, որի համար Լենինը դարի կենդանի ճշմարտությունն է, նրան պատկերացնում է այնպես, ինչպիսին ինքը կուզեր նրան տեսնել։ Բանաստեղծը կոչ է անում Լենինին պատկերել ոչ թե պլակատային, ոչ թե միտինգային, այլ կենդանի ձևով.

... Լե՛նին, այո՛,—Լե՛նին։—Բայց ո՛չ միտինգային,
Բայց ո՛չ թմբուկ թևեր, բայց ո՛չ պլակատ։

---

8 Նիկոլայ Տիխոնով, Սամի, Երևան, 1934, էջ 4։
9 В. Пискунов, Советская Ленониана, М., 1970, с. 13.

Լե՛նին—այսօր արդեն ասել է—դագաթ,
Ասել է—ներքի՛ն կառուցում քո նոր թիմայի։
Այդ թեմա՛ն ուռճանում է այսօր քո մեջ,
Աճում է, բայց ո՛չ այնպես, ինչպես խոտը.
Նա աճում է կամքո՛վ, եռկաթով,—նա կյանքի՛
առավոտ է՝
Մտքի, խորքի, կառուցման անհուն ելևէջ... (հ. 4, էջ 145—146)։

Ե. Չարենցի ստեղծագործություններում Լենինի կերպարի համակողմանի պատկերումը պահանջում է առաջնորդի կերպարը բացահայտել նրա գործունեության տարբեր դիրքերից։ Բանաստեղծը, վերամարմնավորվելով իր հերոսների մեջ, քննում է հասարակության տարբեր խավերի անհատական վերաբերմունքը Լենինի նկատմամբ։ Եթե Ե. Չարենցի առաջին ստեղծագործությունները աֆորիստական են և պատմականորեն ճանաչողական, ապա հետագա գործերում կերպարի կոնկրետացումը տարբեր հերոսների անհատական աշխարհահայեցողության միջով բերում է Լենինի կերպարի ավելի ռեալիստական ինքնավերլուծման և ինքնաբացահայտման։ Լենինի կերպարում մարդկայինը և պատմականը ձայնակցում են միմյանց, դառնում ներդաշնակ շղթա։ Առաջնորդի կերպարը 20-ական թվականներին այդպես էին բացահայտում Վ. Մայակովսկին և Ն. Ասեևը։

Պատմականի և մարդկայինի զուգորդումը առանձնապես ուժեղ է դրսևորված «Բալլադ Վլադիմիր Իլյիչ Լենինի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին» գործում։ Այստեղ, մուժիկի պարզունակ անմիջականությունը, ասես, հանդիպելով Լենինի աննկարագրելի գրաղվածությանը, բացում է անողոք ժամանակի վարագույրը՝ տեղի է ունենում քաղաքացիական պատերազմ, Իլյիչի համար թանկ է ամեն մի րոպեն, բայց ինչպե՞ս չօգնել մուժիկին ճարելու մի զույգ կոշիկ։ Առաջնորդի ամենօրյա պրակտիկան վերածվում է մարդասիրության պատմական փաստի.

— Էխ-է՞խ, մուժիկ...
Քեզ հարկավոր էր—մի զույգ կոշիկ.
Եվ կոշիկի համար
Ընդունեց քեզ Իլյիչը։
— Բայց հասկացա՞ր, մուժի՛կ,
Որ չուներ Իլյիչը ժամանակ,
Որ Իլյիչի համար—
Մեր ժամանակը քի՛չ էր... (հ. 2, էջ 197)։

Ե. Չարենցի ստեղծագործությունների կոմպոզիցիան, սյուժետային առանձնահատկությունների հետ միասին, կոչված է լուծելու բանաստեղծի հիմնական մտահղացումը՝ բազմակողմանի և ներդաշնակ ձևով բացահայտել սիրելի առաջնորդի կերպարը։ Փոխվում են ոչ միայն ժամանակի հեռանկարները, այլև մարդկային կերպարի դիտակցումը։ Այսպես, «Բալլադ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին» երկում Լենինի կերպարի մարմնավորման պարզությունը պայմանավորվում է նրա եռուն կենսագործունեության խորը հիմնավորմամբ։ Պատմելու արագ տեմպը, դիմանկարի ֆրագմենտայնությունը, իրադարձությունների արագ հերթափոխը, հեռագրային ոճը, իրադարձությունների տարբեր ժամանակային ընդգրկումը՝ ընդհուպ մինչև

կոմունիստական ապագայի կանխատեսումները, աշխարհագրական տարբեր լայնություններում կերպարի բացահայտումը՝ այս բոլորը բանաստեղծին թույլ են տալիս հասնելու համապարփակ բազմակողմանիության։

Ե. Չարենցի ստեղծագործություններում Լենինի կերպարի էվոլյուցիան արտացոլում է այն միտումը, որն առկա է բանաստեղծի գործերում՝ սկսած ամենաերկրային մարդու մասին փիլիսոփայական խորհրդածություններ անելուց ընդհուպ մինչև հեղափոխական իրականության առօրյա պայմաններում առաջնորդի կերպարի կոնկրետ բացահայտումը։

Լենինը և նրա ժամանակը, պատմական իրադարձությունները հարաբերակցում, թեմայի համապարփակություն և նրա մարմնավորման պարզություն, ակտիվ կուսակցականություն, հաստատեղ վերապրում իր լիրիկական հերոսի հետ—ահա հաստատուն այն հիմնականը, որ ներդրել է բանաստեղծը Լենինի և Հոկտեմբերյան հեղափոխության մասին գրած իր ստեղծագործություններում, ահա այն գերլարված աշխատանքը, որը հանդիսանում է բանաստեղծ Ե. Չարենցի ստեղծագործության պսակը և, որի մասին ուկրաինացի մեծանուն բանաստեղծ Միկոլա Բաժանը գրել է. «Առաջնորդին նվիրված Չարենցի բանաստեղծությունները լավագույններից են համաշխարհային բանաստեղծական լենինապատումի մեջ»[10]։

ОБРАЗ ЛЕНИНА В ПРОИЗВЕДЕНИЯХ ЕГИШЕ ЧАРЕНЦА

АРА ГЕВОРКЯН

Резюме

Ленинниана Чаренца — это процесс постепенного постижения великого образа. Так глобально к образу Ленина мог подойти только великий поэт, который сам был «совестью своего века».

Глубокая скорбь, рожденная смертью Ленина, требовала монументализации образа вождя. Эту задачу в армянской поэзии выполнил Егише Чаренц. В его произведениях в образе вождя перекликаются историческое и человеческое, а конкретизация образа Ленина делает Ленинниану Чаренца высшим достижением поэтической мысли.

---

10 «Գրական թերթ», 2. II, 1978։